ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՊՄԱՆԵԱՆ ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Պապմանեան,

Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարեանից տեղեկացանք Տիրախնամ թեմին եւ մեր ժողովրդին մատուցած Ձեր օգտաշատ ծառայութիւնների մասին: Գովելի եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը Ձեր հոգում ձեւաւորուել են դեռեւս Ձեր ծննդավայրում՝ Եգիպտոսի աւանդաշատ հայ համայնքում, որտեղ գնահատելի մասնակցութիւն ունեցաք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, ինչպէս եւ ազգային-եկեղեցական այլ կառոյցների աշխատանքներին: Եգիպտոսից Աւստրալիա տեղափոխուելով՝ առաջին իսկ տարիներից Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու քրիստոսահաստատ առաքելութեան իրականացմանը սատար լինելու սրտաբուխ պատրաստակամութեամբ Դուք անդամակցեցիք Սիտնիի Սուրբ Յարութիւն եկեղեցու համայնքային վարչութեանը եւ տարբեր յանձնառութիւններով շարունակեցիք արդիւնաւոր ծառայութիւններ մատուցել ի նպաստ Սիտնիում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքի աշխուժացման:

Առանձնակի գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք, սրտաբուխ նուիրատուութեամբ աջակցում էք Սիտնիում նոր եկեղեցու կառուցման ապտուածահաճոյ նախաձեռնութեանը: Ազնիւ հոգով կատարած Ձեր ընծայաբերումները Ձեր անունը դասել են եկեղեցու եւ Տիրախնամ թեմի երախտաւոր բարերարների պատուաւոր շարքում:

Դուք ջանադիր մասնակցութիւն ունեցաք նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սիտնիի մասնաճիւղի հիմնադրման ազգաշահ գործին՝ հետամուտ լինելով, որպէսզի Միութիւնը նոր յաջողութիւններով շարունակի շնորհաբեր իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն գործունէութիւնը, սիրով ընդառաջ թեմակալ Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով

ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 824